

Սույն փաստաթուղթը միայն փաստաթղթային գործիք է, եւ հաստատությունները դրա բովանդակության համար որեւէ պատասխանատվություն չեն կրում

►B

Գ1

Համայնք որոշակի կենդանի սմբակավոր կենդանիներ ներմուծելու եւ Համայնքում տարանցիկ փոխադրման հետ կապված՝ կենդանիների առողջության վերաբերյալ կանոններ սահմանող՝ 90/426/ԵՏՀ եւ 92/65/ԵՏՀ հրահանգները փոփոխող ու 72/462/ԵՏՀ հրահանգն ուժը կորցրած ճանաչող՝ ԽՈՐՀՐԴԻ 2004 թվականի ապրիլի 26–ի 2004/68/ԵՀ ՀՐԱՀԱՆԳ

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

▼B

(ՊՏ L 139, 30.04.2004թ., էջ.320)

Փոփոխված՝

Պաշտոնական տեղեկագիր

		Թիվ	էջ	ամսաթիվ
►M1	Խորհրդի 2009 թվականի նոյեմբերի 30–ի L 192 2009/156/ԵՀ հրահանգ՝ Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ		1	23.07.2010թ
►M2	Հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 10–ի L 125 կիրարկող որոշում		51	12.05.2012թ

►M1

Ուղղվել է՝

►Գ1 Ուղղում՝ ՊՏ L 226, 25.06.2004թ., էջ 128 (2004/68)

▼B

Գ1

Համայնք որոշակի կենդանի սմբակավոր կենդանիներ ներմուծելու եւ Համայնքում տարանցիկ փոխադրման հետ կապված՝ կենդանիների առողջության վերաբերյալ կանոններ սահմանող՝ 90/426/ԵՏՀ եւ 92/65/ԵՏՀ հրահանգները փոփոխող ու 72/462/ԵՏՀ հրահանգն ուժը կորցրած ճանաչող՝ ԽՈՐՀՐԴԻ 2004 թվականի ապրիլի 26–ի թիվ 2004/68/ԵՀ ՀՐԱՀԱՆԳ

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» համաձայնագիրը եւ, մասնավորապես, դրա 37-րդ հոդվածը(1),

հաշվի առնելով Հանձնաժողովի առաջարկը,

հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի եզրակացությունը(2),

հաշվի առնելով Տնտեսական եւ սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեի եզրակացությունը,

հաշվի առնելով Տարածաշրջանային հարցերով կոմիտեի եզրակացությունը,

Քանի որ

1) «Երրորդ երկրներից խոշոր եղջերավոր անասունների, ոչխարների եւ այծերի, ինչպես նաեւ խոզերի, թարմ մսի կամ մսամթերքի ներմուծումից հետո առողջության եւ անասնաբուժական տեսչական ստուգումների խնդիրների մասին» 1972 թվականի դեկտեմբերի 12-ի 72/462/ԵՏՀ հրահանգով ապահովվում է կենդանիների առողջության պահպանման բարձր մակարդակ,

որով երրորդ երկրներից(3) ներմուծման որոշակի դեպքերին վերաբերող ընդհանուր սանիտարական պահանջներ են սահմանվում:

2) Անհրաժեշտ է ուսցիոնալացնել եւ թարմացնել կենդանիների միջազգային առևտրին վերաբերող՝ կենդանիների առողջության մասին դրույթները, որոնք նախատեսված են 72/462/ԵՀ կանոնակարգով՝ պայմանավորված Անասնահամաճարակների դեմ պայքարի միջազգային գործակալության(ԱՊՄԳ) միջազգային չափանիշների զարգացման եւ այդ Գործակալության կողմից նոր չափանիշների ընդունմամբ, Առևտրի միջազգային կազմակերպության (WTO,ԱՄԿ) ու Սանիտարական եւ ֆիտոսանիտարական միջոցների կիրառման մասին համաձայնագրի շրջանակներում դրանց նշանակության հետ մեկտեղ:

3)Բացի դրանից՝ մարդկանց կողմից իրացման համար նախատեսված կենդանական ծագում ունեցող արտադրանքի արտադրությունը, մշակումը, բաշխումը եւ ներմուծումը կարգավորող՝ կենդանիների առողջության վերաբերյալ կանոններ սահմանող՝ Խորհրդի 2002 թվականի դեկտեմբերի 16-ի 2002/99/ԵՀ հրահանգով(4) փոխարինվում են 72/462/ԵՏՀ հրահանգով նախատեսված՝ մսի եւ մսամթերքի վերաբերյալ պահանջները: Հետեւաբար, անհրաժեշտ եւ հարկ է սույն Հրահանգում սահմանել կենդանիների առողջությանը վերաբերող նմանատիպ ու նորացված դրույթներ՝ Համայնք կենդանի սմբակավոր կենդանիներ ներմուծելու վերաբերյալ:

4) Կենդանիների առողջության պահպանման նպատակով այս նոր դրույթների գործողության շրջանակը պետք է ընդլայնվի՝ ներառելու համար այլ սմբակավոր կենդանիների, որոնք հիվանդության փոխանցման նմանատիպ վտանգ կարող են ներկայացնել: Այնուամենայնիվ, դրանց կիրառումը՝ այդպիսի կենդանիների հետ կապված, չպետք է հակասի «Վայրի ֆաունայի եւ ֆլորայի տեսակների հետ կապված՝ առևտրի կարգավորման միջոցով այդ տեսակների պաշտպանության մասին» Խորհրդի 1996 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 338/97 կանոնակարգին (ԵՀ) (5):

5) «Երրորդ երկրներից ձիազգիների տեղաշարժը եւ ներմուծումը կարգավորող՝ կենդանիների առողջության վերաբերյալ պայմանների մասին» Խորհրդի 1990 թվականի հունիսի 26-ի հրահանգի համաձայն (6)՝ Համայնք ձիազգիների ներմուծումը թույլատրվում է միայն այն երրորդ երկրներից, որոնք ընդգրկված են 72/462/ԵՏՀ հրահանգի համաձայն պատրաստված ցանկում: 90/426/ԵՏՀ կանոնակարգում պետք է ընդգրկվեն այդպիսի ձիազգիների ներմուծման համար երրորդ երկրների ցանկը սահմանող դրույթներ:

6) Հիվանդությունների նկատմամբ որոշակի կենդանիների ընկալունակության եւ դրանց հետազոտության վերաբերյալ գիտական գիտելիքները մշտապես փոփոխվում են: Հետեւաբար, պետք է սահմանվի ընթացակարգ, այնպես որ, արձագանքելով նման զարգացումների, հնարավոր լինի արագորեն թարմացնել կենդանիների տեսակների ցանկի շրջանակը եւ այն հիվանդությունների շրջանակը, որոնց նկատմամբ դրանք ընկալունակ են:

7) Կենդանիների բարեկեցության եւ Համայնքի օրենսդրությանը համապատասխանության շահերից ելնելով՝ սույն Հրահանգում պետք է հաշվի առնվեն Խորհրդի՝ փոխադրման ընթացքում կենդանիների պաշտպանության մասին 1991 թվականի նոյեմբերի 19-ի 91/628/ԵՏՀ հրահանգի ընդհանուր պահանջները (7), մասնավորապես՝ ջուր խմեցնելու եւ կերակրելու վերաբերյալ:

8) Կենդանիների առողջության պաշտպանության եւ Համայնքի օրենսդրության համապատասխանության շահերից ելնելով՝ նաեւ պետք է հաշվի առնվի Համայնք երրորդ երկրներից բերվող կենդանիների անասնաբուժական ստուգումների կազմակերպումը կարգավորող սկզբունքները սահմանող՝ Խորհրդի (8) 1991 թվականի հուլիսի 15-ի 91/496/ԵՏՀ հրահանգը:

9) Սույն Հրահանգի կիրարկման համար անհրաժեշտ միջոցները պետք է ընդունվեն Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի 1999/468/ԵՀ որոշմանը համապատասխան(9)

10) 72/462/ԵՏՀ հրահանգին համապատասխան՝ մսին եւ մսամթերքին վերաբերող հանրային առողջության ու պաշտոնական հսկողության կանոնները փոխարինվել են մարդու կողմից սպառման համար նախատեսված՝ կենդանական ծագում ունեցող արտադրանքի պաշտոնական հսկողությունը կազմակերպելու համար կոնկրետ կանոններ սահմանող՝ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2004 թվականի ապրիլի 29-ի թիվ 854/2004 կանոնակարգի կանոններով (10), որոնք պետք է կիրարկվեն 2006 թվականի հունվարի 1-ից սկսած: Նշված հրահանգի մյուս կանոնները փոխարինվել են 2002/99/ԵՀ հրահանգով, որի դրույթները կիրարկվում են 2005 թվականի հունվարի 1-ից կամ կփոխարինվեն սույն Հրահանգի կանոններով:

11) Հետեւաբար, 72/462/ԵՏՀ հրահանգը պետք է ուժը կորցրած ճանաչվի, երբ դրա դրույթներին փոխարինող բոլոր փաստաթղթերը կիրարկելի կլինեն:

12) Այնուամենայնիվ, անհրաժեշտ է, որ Համայնքի օրենսդրության պարզության շահերից ելնելով, չեղյալ համարել որոշակի որոշումներ, որոնք այլեւս կիրարկելի չեն, եւ միաժամանակ նախատեսել որոշակի կիրարկող կանոններ, որոնք ուժի մեջ կմնան՝ մինչեւ նոր իրավական շրջանակի ներքո անհրաժեշտ միջոցների ընդունումը:

13) Համաձայն համամասնության սկզբունքի՝ կենդանիների առողջության պաշտպանության տարրական նպատակին հասնելու համար անհրաժեշտ եւ նպատակահարմար է սահմանել կանոններ՝ կենդանի սմբակավոր կենդանիների ներմուծման պայմանների վերաբերյալ: Սույն Կանոնակարգով չի կարգավորվում ավելին, քան սահմանված է իր նպատակներով՝ Համաձայնագրի 5-րդ հոդվածի երրորդ պարբերության համաձայն:

14) Սննդամթերքի վերաբերյալ իրավունքի ընդհանուր սկզբունքներն ու պահանջները սահմանող՝ Սննդամթերքի անվտանգության եվրոպական մարմինը հիմնադրող եւ սննդամթերքի անվտանգության հարցերում ընթացակարգերը սահմանող՝ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2002 թվականի հունվարի 28-ի թիվ 178/2002 կանոնակարգով (ԵՀ)(11), սահմանվում են կոմիտեի նոր ընթացակարգերը եւ եզրույթները Համայնքի օրենսդրության ներքին համապատասխանության շահերից ելնելով՝ սույն Կանոնակարգում պետք է հաշվի առնվեն այդ ընթացակարգերն ու եզրույթները:

15) Համայնքում՝ 90/425/ԵՏՀ հրահանգի Ա (I) հավելվածում նշված՝ Համայնքի կոնկրետ կանոններում սահմանված՝ կենդանիների առողջության պահանջներին ոչ ենթակա՝ կենդանիների, սերմնահեղուկի, ձվաբջիջների եւ սաղմերի առետուրն ու դրանց՝ Համայնք ներմուծումը կարգավորող կենդանիների առողջությանը վերաբերող պահանջները սահմանող՝ Խորհրդի 1992 թվականի հուլիսի 13-ի 92/65/ԵՏՀ կանոնակարգով, (12) սահմանվում են Համայնք սմբակավոր կենդանիների ներմուծման պայմանները՝ բացառությամբ ընտանի խոշոր եղջյուրավոր կենդանիների, ոչխարների, այծերի, խոզերի ու ձիերի, եւ նախատեսվում է սահմանել այն երրորդ երկրների ցանկը, որոնցից անդամ պետությունները կարող են ներմուծել նմանատիպ կենդանիներ, ինչպես նաեւ՝ առողջության վերաբերյալ առաջադրվող պահանջները:

Սույն Հրահանգը պետք է փոփոխվի՝ սույն ակտում ներառված կենդանիների տեսակները դրա շրջանակից բացառելու համար:

16) Նաեւ անհրաժեշտ է նախատեսել, որ 92/65/ԵՏՀ հրահանգում ներառված կենդանի կենդանիների ներմուծման նկատմամբ հետազոտության պահանջները թարմացվեն կամ սահմանվեն կոմիտեի ընթացակարգի ներքո:

17) Հետեւաբար, պետք է համապատասխան փոփոխություններ կատարել թիվ 90/426/ԵՏՀ եւ 92/65/ԵՏՀ հրահանգներում,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

ԳԼՈՒԽ I

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

Հոդված 1

Կարգավորման առարկան եւ գործողության ոլորտը

Սույն Հրահանգով սահմանվում է կենդանի սմբակավորներ Համայնք ներմուծելու եւ Համայնքի տարածքով տարանցիկ փոխադրելու համար կենդանիների առողջության վերաբերյալ պահանջները:

Հոդված 2

Սահմանումները

Սույն Հրահանգի նպատակներից ելնելով՝ կիրառվում են հետեւյալ սահմանումները՝

ա) «երրորդ երկրներ» նշանակում է անդամ պետություններ չհանդիսացող երկրներ եւ անդամ պետությունների այն տարածքները, որոնց չի վերաբերում Խորհրդի՝ ներքին շուկա ձեւավորելու համար միջհամայնքային առեւտրում անասնաբուժական ստուգումների անցկացման վերաբերյալ 1989 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 89/662/ԵՏՀ հրահանգը(13) եւ միջհամայնքային առեւտրում որոշ կենդանի կենդանիների եւ արտադրանքի նկատմամբ

իրականացվող անասնաբուժական ու զոոտեխնիկական ստուգումների անցկացման վերաբերյալ Խորհրդի (14) 1990 թվականի հունիսի 26–ի թիվ 90/425/ԵՏՀ հրահանգը,

բ) «լիազորված երրորդ երկիր» նշանակում է երրորդ երկիր կամ երրորդ երկրի մաս, որտեղից I հավելվածում թվարկված կենդանի սմբակավոր կենդանիների ներմուծումը Համայնք լիազորված է՝ ինչպես նախատեսված է 3(1) հոդվածով,

գ) «անասնաբուժական պետական տեսուչ» նշանակում է անասնաբույժ, ով լիազորված է երրորդ երկրի անասնաբուժական տեսչության կողմից կատարել կենդանի կենդանիների առողջության զննումներ եւ իրականացնել պաշտոնական հավաստագրում,

դ) «սմբակավորներ» նշանակում է 1–ին հավելվածում թվարկված կենդանիներ:

ԳԼՈՒԽ II

ՈՐՈՇԱԿԻ ԿԵՆԴԱՆԻ ՍՄԲԱԿԱՎՈՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ՀԱՄԱՅՆՔ ՆԵՐՄՈՒԾԵԼՈՒ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌԵԼԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Հոդված 3

Լիազորված երրորդ երկրներ

1. Կենդանի սմբակավոր կենդանիների ներմուծումը Համայնք եւ տարանցիկ փոխադրումը Համայնքի տարածքով լիազորվում է միայն այն երրորդ երկրներից, որոնք ներառված են ցանկերում, որոնք պետք է պատրաստվեն կամ փոփոխվեն 14(2) հոդվածում նշված ընթացակարգին համապատասխան:

Հաշվի առնելով I հավելվածում թվարկված կենդանիների առողջության հետ կապված իրավիճակը եւ երրորդ երկրների կողմից նախատեսված երաշխիքները, կարող է որոշում կայացվել՝ համաձայն 14(2) հոդվածում նշված ընթացակարգի, որ նախորդ ենթապարբերությամբ նախատեսված լիազորագրումը կիրարկվի լիազորված երրորդ երկրի ամբողջ տարածքի կամ դրա տարածքի միայն մեկ մասի նկատմամբ:

Այդ նպատակով եւ համապատասխան միջազգային չափանիշների հիման վրա, պետք է հաշվի առնել թե ինչպես է լիազորված երրորդ երկիրը կիրարկում եւ իրականացնում այդ չափանիշները, մասնավորապես՝ տարածաշրջայնացման (ռեգիոնալիզացիա) սկզբունքը դրա տարածքի ներսում եւ այլ երրորդ երկրներից ու Համայնքից ներմուծման նկատմամբ դրա սանիտարական պահանջների հետ կապված:

2. Առաջին պարբերությամբ սահմանված՝ կենդանի սմբակավորների Համայնք ներմուծման կամ Համայնքի տարածքով դրանց տարանցիկ փոխադրման լիազորումը եւ 6(3) հոդվածով նախատեսված՝ կենդանիների առողջության վերաբերյալ կոնկրետ պայմանների գործողությունը կարող է ժամանակավորապես դադարեցվել կամ անվավեր համարվել՝ համաձայն 14(2) հոդվածում նշված ընթացակարգի, այն դեպքում, երբ այդպիսի ժամանակավոր դադարեցումը կամ անվավեր ճանաչումը հիմնավորվում է լիազորված երրորդ երկրում կենդանիների առողջության հետ կապված իրավիճակով:

Հոդված 4

Լիազորված երրորդ երկրների ցանկը պատրաստելը

Լիազորված երրորդ երկրների ցանկի պատրաստման կամ փոփոխման դեպքում պետք է հատկապես հաշվի առնել.

ա) երրորդ երկրի անասունների, այլ ընտանի կենդանիների եւ կենդանական աշխարհի առողջական վիճակը՝ հատկապես հաշվի առնելով կենդանիների տարաշխարհիկ հիվանդություններն ու երրորդ երկրում ընդհանուր առողջական վիճակի եւ շրջակա միջավայրի հետ կապված իրավիճակի ցանկացած ասպեկտ, որը կարող է վտանգ ներկայացնել Համայնքի առողջության եւ շրջակա միջավայրի հետ կապված կարգավիճակին,

բ) երրորդ երկրի օրենսդրությունը՝ կապված կենդանիների առողջության եւ բարեկեցության հետ,

գ) իրավասու անասնաբուժական մարմնի կազմակերպությունը եւ դրա տեսչական ծառայությունները, այդ ծառայությունների լիազորությունները, այն վերահսկողությունը, որին դրանք ենթակա են, եւ դրանց տրամադրության տակ գտնվող միջոցները՝ ներառյալ

անձնակազմը եւ լաբորատոր կարողությունները՝ ազգային օրենսդրությունն արդյունավետ կերպով կիրառելու համար,

դ) երաշխիքներ, որոնք երրորդ երկրի իրավասու անասնաբուժական մարմինը կարող է տալ Համայնքում կիրառելի կենդանիների առողջության վերաբերյալ համապատասխան պայմաններին համապատասխանության կամ համարժեքության մասին,

ե) արդյոք երրորդ երկիրը ԿՀՊՄԳ անդամ է եւ երրորդ երկրի կողմից՝ դրա տարածքում կենդանիների ինֆեկցիոն կամ վարակիչ հիվանդությունների, հատկապես ԿՀՊՄԳ-ի կողմից թվարկված երկրների առկայության վերաբերյալ տեղեկատվության տրամադրման կանոնավորությունն ու արագությունը,

զ) անմիջապես երրորդ երկրի կողմից տրամադրված երաշխիքները՝ Հանձնաժողովին եւ անդամ պետություններին տեղեկացնելու նպատակով.

ii) հավելվածում թվարկված որեւէ հիվանդության առկայության հաստատմանը եւ այդպիսի հիվանդություններից պատվաստման կանոնների որեւէ փոփոխությանը հաջորդող 24 ժամերի ընթացքում,

ii) համապատասխան ժամկետում՝ կենդանի սմբակավոր կենդանիների առումով՝ առողջության մասին ազգային կանոնների համար առաջարկվող փոփոխությունները, մասնավորապես՝ ներմուծման վերաբերյալ,

iii) պարբերաբար՝ կենդանիների առողջական վիճակն իր տարածքում,

ժ) երրորդ երկրից կենդանի կենդանիների նախորդ ներմուծման որեւէ փորձ եւ ներմուծման համար իրականացված հսկողությունների արդյունքները,

ը) Համայնքի տեսչական ստուգումների եւ(կամ) երրորդ երկրում անցկացրած ստուգումների արդյունքները, մասնավորապես՝ իրավասու մարմինների գնահատման արդյունքները, կամ եթե Հանձնաժողովն այդպես է պահանջում՝ դրանց կողմից անցկացրած տեսչական ստուգումների մասին իրավասու մարմիններին ներկայացված հաշվետվությունը,

ի) երրորդ երկրում գործող՝ կենդանիների ինֆեկցիոն կամ վարակիչ հիվանդությունների կանխարգելման եւ հսկողության կանոններն ու դրանց կիրարկումը՝ ներառյալ այլ երրորդ երկրներից ներմուծման մասին կանոնները:

Հոդված 5

Հանձնաժողովի կողմից լիազորված երրորդ երկրների ցանկերի հրապարակումը

Հանձնաժողովը կազմակերպում է 3(1) հոդվածի համաձայն կազմված կամ փոփոխված բոլոր ցանկերի թարմացված տարբերակների հանրամատչելիությունը:

Այդ ցանկերը պետք է համակցվեն կենդանիների եւ հանրային առողջության նպատակներով կազմվող այլ ցանկերի հետ եւ նաեւ կարող են ներառել առողջության մասին վկայականների նմուշօրինակներ:

Հոդված 6

Կենդանիների առողջության վերաբերյալ հատուկ պայմաններ՝ Համայնք լիազորված երրորդ երկրներից կենդանի սմբակավորների ներմուծման եւ տարանցիկ փոխադրման համար

1. Համայնք լիազորված երրորդ երկրներից կենդանի սմբակավորների ներմուծման եւ տարանցիկ փոխադրման համար կենդանիների առողջության վերաբերյալ հատուկ պայմանները սահմանվում են համաձայն 14(2) հոդվածում նշված ընթացակարգի:

Դրանցում կարող է հաշվի առնվել հետևյալը.

ա) կենդանիների համապատասխան տեսակները,

բ) կենդանիների տարիքը եւ սեռը,

գ) կենդանիների համար նախատեսված նշանակետը կամ նշանակությունը,

դ) միջոցներ, որոնք պետք է կիրառվեն Համայնք կենդանիների ներմուծումից հետո,

ե) ցանկացած հատուկ պայման, որը կիրառելի է միջհամայնքային առետրի շրջանակում:

2. Առաջին պարբերությամբ նախատեսված՝ կենդանիների առողջության վերաբերյալ հատուկ պայմանները հիմնվում են Համայնքի օրենսդրությամբ սահմանված կանոնների վրա՝ այն հիվանդությունների վերաբերյալ, որոնց նկատմամբ ընկալունակ են կենդանիները:

3. Այնուամենայնիվ, երբ Համայնքը կարող է պաշտոնապես ճանաչել համապատասխան երկրի կողմից տրամադրված առողջության պաշտոնական երաշխիքների համարժեքությունը, կենդանիների առողջության վերաբերյալ հատուկ պայմանները կարող են հիմնվել այդ երաշխիքների վրա:

Հոդված 7

Լիազորված երրորդ երկրի երաշխիքներ՝ Համայնք կենդանի սմբակավորների ներմուծման վերաբերյալ

Համայնք կենդանի սմբակավորների ներմուծումը թույլատրվում է միայն այն դեպքում, եթե լիազորված երրորդ երկիրը տրամադրում է հետևյալ երաշխիքները.

ա) կենդանիները պետք է բերվեն հիվանդություններից զերծ տարածքից՝ համաձայն II հավելվածում թվարկված տարրական ընդհանուր չափորոշիչների, եւ որտեղ այդ հավելվածում թվարկված հիվանդություններից պատվաստված կենդանիների մուտքը պետք է արգելվի,

բ) կենդանիները պետք է համապատասխանեն 6-րդ հոդվածով նախատեսված՝ կենդանիների առողջության վերաբերյալ հատուկ պայմաններին,

գ) Համայնք առաքման համար բեռնման օրվանից առաջ կենդանիները պետք է մնացած լինեն լիազորված երրորդ երկրի տարածքում 6-րդ հոդվածում նշված՝ կենդանիների առողջության վերաբերյալ հատուկ պայմաններով սահմանվելիք ժամանակահատվածում,

դ) Համայնք առաքումից առաջ կենդանիները պետք է ստուգում անցնեն անասնաբուժական պետական տեսուչի կողմից՝ ապահովելու համար, որ դրանք առողջ են, եւ որ կատարված են 91/628/ԵՏՀ հրահանգով նախատեսված՝ փոխադրման վերաբերյալ պայմանները, մասնավորապես՝ ջուր խմեցնելու եւ կերակրելու վերաբերյալ,

ե) կենդանիներին կից կարող է ներկայացվել 11-րդ հոդվածին համապատասխանող անասնաբուժական վկայագիրը եւ անասնաբուժական վկայագրի նմուշը՝ պատրաստված 14(2) հոդվածում նշված ընթացակարգին համապատասխան:

Նույն ընթացակարգի շրջանակներում կարող է նախատեսվել էլեկտրոնային փաստաթղթերի օգտագործում,

զ) Համայնք հասնելուն պես կենդանիները պետք է ստուգվեն համաձայնեցված սահմանային ստուգման անցակետում՝ 91/496/ԵՏՀ հրահանգի 4-րդ հոդվածին համապատասխան:

Հոդված 8

Շեղում լիազորված երրորդ երկրների կողմից տրամադրվելիք երաշխիքներից

Շեղում կատարելով 6-րդ եւ 7-րդ հոդվածներից՝ հատուկ դրույթները՝ ներառյալ անասնաբուժական վկայագրերի նմուշօրինակները, կարող են սահմանվել 3(1) հոդվածի համաձայն լիազորված երրորդ երկրներից կենդանի սմբակավորների ներմուծման կամ տարանցիկ փոխադրման վերաբերյալ՝ 14(2) հոդվածում նշված ընթացակարգին համապատասխան, եթե այդ կենդանիները.

ա) նախատեսվում են Համայնքի սահմանների մոտակայքում բացառապես արածելու կամ որպես քարշուժ ժամանակավորապես ծառայելու համար,

բ) կապված են սպորտային իրադարձությունների, կրկեսների, ցուցադրությունների եւ ցուցահանդեսների հետ, սակայն չեն առնչվում հենց կենդանիների ներգրավմամբ առևտրային գործարքներին,

գ) նախատեսվում են կենդանաբանական այգու, զվարճանքների զբոսայգու, փորձարարական լաբորատորիայի համար կամ, ինչպես սահմանված է 92/65/ԵՏՀ հրահանգի 2(գ) հոդվածով՝ հաստատված մարմնի, հաստատված ինստիտուտի կամ հաստատված կենտրոնի համար,

դ) Համայնքի տարածքով բացառապես տարանցիկ փոխադրվում են Համայնքի հաստատված սահմանային ստուգման անցակետերի միջով՝ մաքսային մարմինների եւ պետական անասնաբուժական տեսուչի հաստատման ու վերահսկողության ներքո՝ կանգ չառնելով Համայնքում՝ բացառությամբ կենդանիների բարեկեցության համար անհրաժեշտ դեպքերի,

ե) տարվում են դրանց տերերի հետ՝ որպես ընտանի կենդանիներ,

կամ

զ) ներկայացվում են Համայնքի հաստատված սահմանային ստուգման անցակետ Համայնքի տարածքից դուրս գալուց հետո.

- 30- օրյա ժամանակահատվածում՝ (ա), (բ) եւ (ե) կետերում նշված նպատակներից որեւէ մեկով,

— կամ

-երրորդ երկրով տարանցիկ փոխադրման ժամանակ,

կամ

է) վտանգված տեսակներին պատկանողները:

Հոդված 9

Շեղում 7(ա) հոդվածից լիազորված երրորդ երկրներից ներմուծման կամ տարանցիկ փոխադրման հետ կապված, այն դեպքում, երբ առկա են II հավելվածում թվարկված հիվանդությունները եւ (կամ) կատարվում են պատվաստումներ

Շեղում կատարելով 7(ա) հոդվածից եւ 14(2) հոդվածում նշված ընթացակարգին համապատասխան՝ կարող են սահմանվել երրորդ լիազորված երկրից Համայնք կենդանի սմբակավորների ներմուծման կամ տարանցիկ փոխադրման պայմաններ՝ II հավելվածում թվարկված որոշակի հիվանդությունների առկայության եւ (կամ) այդ հիվանդությունների դեմ պատվաստումների իրականացման դեպքում:

Այդպիսի շեղումները սահմանվում են առանձին յուրաքանչյուր երկրի համար:

Հոդված 10

Շեղում 7(ա) հոդվածից՝ լիազորված երրորդ երկրներից ներմուծման կամ տարանցիկ փոխադրման հետ կապված, այն դեպքում, երբ ներմուծումը կամ տարանցիկ փոխադրումը ժամանակավորապես դադարեցվել կամ արգելվել է

Շեղում կատարելով 7(ա) հոդվածից եւ համաձայն 14(2) հոդվածում նշված ընթացակարգի, կարող է սահմանվել հատուկ ժամկետ, որից հետո կենդանի սմբակավորների ներմուծումը կամ տարանցիկ փոխադրումը լիազորված երրորդ երկրից կարող է վերսկսվել՝ ներմուծման կամ տարանցիկ փոխադրման ժամանակավոր դադարեցումից կամ արգելքից հետո՝ առողջության

հետ կապված իրավիճակում որեւէ փոփոխության պատճառով՝ այդպիսի վերսկսումից հետո կատարվելիք որեւէ լրացուցիչ պայմանների հետ մեկտեղ:

Այդպիսի կենդանիների ներմուծումը կամ տարանցիկ փոխադրումը վերսկսելու մասին որոշում կայացնելիս պետք է հաշվի առնել.

- միջազգային չափանիշները,

-արդյոք II հավելվածում թվարկված հիվանդություններից մեկի բռնկում կամ կենդանահամաճարակագիտության տեսանկյունից փոխկապակցված բռնկումներ են տեղի ունենում լիազորված երրորդ երկրի կամ տարածաշրջանի աշխարհագրորեն սահմանափակ տարածքում,

-արդյոք բռնկումը կամ բռնկումները բարեհաջող վերացվել են սահմանափակ ժամանակահատվածում:

Հոդված 11

Անասնաբուժական վկայագրեր

1. Երրորդ հավելվածով սահմանված պահանջներին համապատասխանող անասնաբուժական վկայագրերը պետք է ներկայացվեն կենդանիների յուրաքանչյուր խմբաքանակի հետ՝ դրանց Համայնք ներմուծման կամ տարանցիկ փոխադրման ժամանակ:

2. Անասնաբուժական վկայագրով հավաստվում է համապատասխանությունը սույն Հրահանգի եւ կենդանիների առողջության վերաբերյալ Համայնքի օրենսդրության պահանջներին եւ, 6(3) հոդվածի համաձայն՝ համապատասխան դեպքերում, այդ պահանջներին համարժեք դրույթներին:

3. Անասնաբուժական վկայագիրը կարող է ներառել Համայնքի՝ հանրային առողջության, կենդանիների առողջության եւ կենդանիների բարեկեցության վերաբերյալ այլ օրենսդրությամբ պահանջվող հավաստագրման մասին հայտարարություններ:

4. Առաջին պարբերությամբ նախատեսված անասնաբուժական վկայագրի օգտագործումը կարող է ժամանակավորապես դադարեցվել կամ այն հետ է կանչվել՝ համաձայն 14(2) հոդվածում նշված ընթացակարգի, այն դեպքում, երբ այդպիսի ժամանակավոր դադարեցումը

կամ հետկանչումը հիմնավորված է լիազորված երրորդ երկրում կենդանիների առողջության հետ կապված իրավիճակով:

Հոդված 12

Տեսչական ստուգումներ եւ ստուգումներ երրորդ երկրներում

1. Հանձնաժողովի փորձագետները երրորդ երկրներում կարող են տեսչական ստուգումներ եւ(կամ) ստուգումներ անցկացնել՝ ստուգելու համապատասխանությունը կամ համարժեքությունը Համայնքի՝ կենդանիների առողջության մասին կանոններին:

Հանձնաժողովից անդամներին կարող են ուղեկցել փորձագետներ անդամ պետություններից, որոնք լիազորված են անցկացնելու այդպիսի տեսչական ստուգումներ եւ(կամ) ստուգումներ:

2. Առաջին պարբերությամբ նախատեսված տեսչական ստուգումները եւ(կամ) ստուգումներն իրականացվում են Համայնքի կողմից եւ Հանձնաժողովը հոգում է կատարված ծախսերը:

3. Երրորդ երկրներում տեսչական ստուգումներ եւ(կամ) ստուգումներ իրականացնելու համար ընթացակարգը, ինչպես նախատեսված է 1-ին պարբերությամբ, կարող է սահմանվել կամ փոփոխվել՝ համաձայն 14(2) հոդվածում նշված ընթացակարգի:

4. Եթե տեսչական ստուգման եւ(կամ) ստուգման ընթացքում հայտնաբերվում է կենդանիների առողջությանը սպառնացող լուրջ վտանգ, ինչպես նախատեսված է 1-ին պարբերությամբ, նույնիսկ եթե այն անմիջապես չի առնչվում տեսչական ստուգման(ստուգման) նպատակներին, ապա Հանձնաժողովը պետք է անմիջապես ձեռնարկի միջոցներ, որոնք անհրաժեշտ են՝ կենդանիների առողջությունը պաշտպանելու համար՝ 91/496/ԵՏՀ հրահանգի 18-րդ հոդվածում սահմանված կարգով՝ ներառյալ 3(1) հոդվածով սահմանված լիազորագրի գործողության ժամանակավոր դադարեցումը կամ հետկանչումը:

Հոդված 13

Դրույթներ լիազորման վերաբերյալ

1. 14(2) հոդվածում նշված ընթացակարգի համաձայն՝ կարող է սահմանվել հետեւյալը.

- ա) սույն Կանոնակարգի կիրարկման մանրամասն կանոններ,
 - բ) կանոններ կենդանիների ծագման վերաբերյալ
 - գ) չափորոշիչներ՝ լիազորված երրորդ երկրները կամ դրանց շրջանները՝ ըստ կենդանիների հիվանդությունների, դասակարգելու համար,
 - դ) անասնաբուժական վկայագրերի նմուշօրինակներին առնչվող էլեկտրոնային փաստաթղթերի վերաբերյալ դրույթներ՝ ինչպես նախատեսված է 7(ե) հոդվածով,
 - ե) անասնաբուժական վկայագրերի նմուշօրինակներ՝ ինչպես նախատեսված է 11(1) հոդվածով:
2. Սույն Հրահանգի հավելվածները կարող են փոփոխվել 14(2) հոդվածում նշված ընթացակարգի համաձայն՝ հաշվի առնելու համար, մասնավորապես.
- ա) գիտական եզրակացություններ եւ գիտական գիտելիք, մասնավորապես՝ նոր վտանգների գնահատման վերաբերյալ,
 - բ) միջազգային չափորոշիչների տեխնիկական զարգացումը եւ(կամ) փոփոխությունները,
 - գ) կենդանիների առողջության առումով անվտանգության թիրախների սահմանումը:

Հոդված 14

Կոմիտեի կողմից կիրարկվող ընթացակարգը

1. Հանձնաժողովին աջակցում է թիվ 178/2002 կանոնակարգի (ԵՀ) 58-րդ հոդվածի համաձայն ստեղծված՝ Սննդի շղթայի եւ կենդանիների առողջության հարցերով մշտական կոմիտեն:
2. Սույն պարբերությանը հղում կատարվելու դեպքում, կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 5-րդ եւ 7-րդ հոդվածները:
1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 օր:
3. Կոմիտեն պետք է ընդունի իր ընթացակարգային կանոնները:

▼M1

Հոդված 16

92/65/ԵՏՀ հրահանգում կատարվող փոփոխությունները

92/65/ԵՏՀ հրահանգում կատարվել են հետևյալ փոփոխությունները՝

ա) Առաջին հոդվածի առաջին ենթապարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Սույն Հրահանգով սահմանվում են կենդանիների առողջության վերաբերյալ պահանջները՝ Համայնքում այն կենդանիների, սերմնահեղուկի, ձվաբջիջների եւ սաղմերի առետրի ու Համայնք դրանց ներմուծման մասով, որոնց չեն վերաբերում «2» հավելվածում նշված՝ Համայնքի հատուկ ակտերով սահմանված՝ կենդանիների առողջության վերաբերյալ պահանջները:»

2. 6-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

ա) Ա(1)-ում (ե) կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«(ե)-ին պետք է կցվի «Ե» հավելվածի 1-ին մասում ներկայացված նմուշին համապատասխանող վկայագիրը, որը պարունակում է հետևյալ հայտարարությունը.»

Հայտարարություն

Ես՝ ներքոստորագրյալս, (անասնաբուժական պետական տեսուչ), հավաստում եմ, որ որոճող(որոճողներ)ը

(խոզը (խոզերը)) 1 որը (որոնք) ներկայացված չէ(չեն) 64/432/ԵՏՀ հրահանգում.

(i) պատկանում են(պատկանում է); (տեսակին)

(ii) զննման ժամանակ, դրանց (դրա) մոտ չեն հայտնաբերվել որեւէ հիվանդության կլինիկական հատկանշան, որին այն (դրանք) ընկալունակ է(են),

iii) ծագում են (է) պալարախտից (տուբերկուլյոզ) պաշտոնապես զերծ(բրուցեյրոզից պաշտոնապես զերծ կամ բրուցեյրոզից զերծ հոտից (հաստատությունից) որը ենթակա չէ խոզերի ժանտախտի հետ կապված սահմանափակումներին, կամ հաստատությունից, որտեղ այն (նրանք) ենթարկվել են(էին) 92/65 ԵՏՀ հրահանգի 6(2)(բ) հոդվածով սահմանված հետազոտության (հետազոտությունների) եւ ունեցել են բացասական արդյունքներ:

Ջնջել՝ կիրարկելի չլինելու դեպքերում.»»,

բ) Ա(1)–ում ջնջվում է (գ) կետը,

գ) Ա(2)–ում (բ) կետը շարադրվում է հետեւյալ բովանդակությամբ.

«(բ) այն դեպքում, եթե դրանք չեն վերցնում (ա)–ում սահմանված պայմաններին համապատասխանող նախիրից, դրանք պետք է վերցնեն մի հաստատությունից, որտեղ կենդանիների բեռնմանը նախորդող 42 օրվա ընթացքում չի գրանցվել բրուցելյոզի կամ տուբերկուլյոզի դեպք եւ որում մատակարարմանը նախորդող 30 օրվա ընթացքում որոճողներն անցել են բրուցելյոզի եւ տուբերկուլյոզի հետազոտություն՝ բացասական արդյունքներով:

դ) Ա(3)–ում ջնջվում են (ե), (զ) եւ (է) կետերը,

ե) Ա)–ին ավելացվում է հետեւյալ կետը.

«4. Սույն հոդվածում նշված հետազոտության վերաբերյալ պահանջները եւ դրանց չափորոշիչները կարող են սահմանվել 26–րդ հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան: Սույն որոշումներում հաշվի է առնվում Համայնքի արկտիկական շրջաններում բուժված որոճողների դեպքը:

Պայմանավորված նախորդ ենթապարբերությամբ նախատեսված որոշումներով՝ ազգային կանոնները շարունակում են կիրառվել.»

3.

8. 17–րդ հոդվածը փոփոխել հետեւյալ խմբագրությամբ՝

ա)3–րդ պարբերության մեջ (ա) եւ (բ) կետերը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«(ա) ցանկ՝ երրորդ երկրների կամ երրորդ երկրների մասերի, որոնք կարող են անդամ պետություններին եւ Հանձնաժողովին տրամադրել կենդանիների, սերմնահեղուկի, ձվաբջիջների եւ սաղմերի հետ կապված՝ // գլխում նախատեսված երաշխիքներին համարժեք երաշխիքներ,

եւ

բ) չհակասելով Հանձնաժողովի 1994 թվականի հունվարի 31-ի 94/63/ԵՀ որոշմանը, որով սահմանվում է այն երրորդ երկրների ցուցակը, որտեղից անդամ պետությունները լիազորում են

ոչխարների եւ այծերի սերմնահեղուկի, ձվաբջիջների ու սաղմերի եւ խոզերի ձվաբջիջների ու սաղմերի ներմուծումը (15), հավաքակայանների ցանկը, որոնց առումով այդ երրորդ երկրները կարող են տրամադրել 11-րդ հոդվածով նախատեսված երաշխիքները:

Հանձնաժողովը անդամ պետություններին տեղեկացնում է կենտրոնների ցանկերի առաջարկվող փոփոխությունների մասին, եւ անդամ պետությունները 10 աշխատանքային օրերի ընթացքում՝ սկսած առաջարկվող փոփոխությունները ստանալու պահից, Հանձնաժողովին ուղարկում են գրավոր մեկնաբանություններ:

Այն դեպքում, երբ 10 աշխատանքային օրերի ընթացքում անդամ պետություններից գրավոր մեկնաբանություններ չեն ստացվում, առաջարկվող փոփոխությունները համարվում են անդամ պետությունների կողմից ընդունված, եւ ներմուծումը լիազորվում է՝ համաձայն փոփոխված ցուցակների, այն դեպքում, երբ Հանձնաժողովը տեղեկացնում է համապատասխան անդամ պետությունների իրավասու մարմիններին եւ երրորդ երկրին, որ փոփոխությունները հրապարակվում են Հանձնաժողովի կայքում:

Այն դեպքում, երբ 10 աշխատանքային օրերի ընթացքում առնվազն մեկ անդամ պետությունից գրավոր մեկնաբանություններ են ստացվում, Հանձնաժողովը դրա հաջորդ ժողովի ժամանակ տեղեկացնում է անդամ պետություններին ու Սննդի շղթայի եւ կենդանիների առողջության հարցերով մշտական կոմիտեին այդ որոշման մասին, որը պետք է ընդունվի 26-րդ հոդվածի երկրորդ ենթապարբերությունում նշված ընթացակարգին համապատասխան:

4. 23-րդ հոդվածում 6 (Ա)(1)(ե) հոդվածից ջնջվում է «եւ»-ը,

5. 26-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«Հոդված 26

1. Հանձնաժողովին աջակցում է Սննդի շղթայի եւ կենդանիների առողջության հարցերով մշտական կոմիտեն, որը ստեղծվել է Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 178/2002 կանոնակարգի (ԵՀ) 58-րդ հոդվածին համապատասխան(16):

2. Սույն պարբերությանը հղում կատարվելու դեպքում, կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 5-րդ եւ 7-րդ հոդվածները:

1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամանակահատվածը (17) սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն պետք է ընդունի իր ընթացակարգային կանոնները:

6. Սույն Հրահանգի IV հավելվածի տեքստն ավելացվում է որպես «Զ» հավելված:

ԳԼՈՒԽ III

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 17

Անցումային միջոցներ

Անցումային միջոցները կարող են սահմանվել¹⁴⁽²⁾ հոդվածում նշված ընթացակարգին համապատասխան:

Հոդված 18

Ազգային իրավունք փոխատեղելը

1. Սույն Հրահանգի հետ համապատասխանությունն ապահովելու համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը եւ վարչական ակտերը անդամ պետությունները գործողության մեջ են դնում մինչեւ 2005 թվականի նոյեմբերի 20-ը:

Նրանք դրա մասին անհապաղ տեղեկացնում են Հանձնաժողովին:

Եթե անդամ պետություններն ընդունում են այդ միջոցները, ապա դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին կամ ուղեկցվեն նման հղումով՝ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում:

Նման հղում կատարելու մեթոդները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

2. Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում ազգային իրավունքի այն դրույթների տեքստը, որոնք իրենք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում՝ աղյուսակի հետ միասին, որը ցույց է տալիս, թե սույն Հրահանգի դրույթները ինչպես են համապատասխանում ընդունված ազգային դրույթներին:

Հոդված 19

72/462/ԵՏՀ հրահանգն ուժը կորցրած ճանաչելը

72/462/ԵՏՀ հրահանգն ուժը կորցրած է ճանաչվում՝ սկսած թիվ 854/2004 կանոնակարգի (ԵՀ) կիրարկման ամսաթվից:

Հոդված 20

72/462/ԵՏՀ հրահանգին համապատասխան՝ կենդանի կենդանիների, մսի եւ մսամթերքի ներմուծման մասով ընդունված որոշումների համաձայն սահմանված կիրարկող կանոնները (ինչպես թվարկված են սույն Հրահանգի V հավելվածում), ուժի մեջ են մնում այնքան ժամանակ, մինչ դրանք փոխարինվում են նոր կարգավորող շրջանակի ներքո ընդունված միջոցներով:

Հոդված 21

Ուժի մեջ մտնելը եւ կիրառելիությունը

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում դրա հրապարակմանը հաջորդող 20-րդ օրը:

Հոդված 22

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

ՀԱՎԵԼՎԱԾ I

Առաջին հոդվածում նշված կենդանիների տեսակները

Տարբերակ		
Կարգ	Ընտանիք	Խումբ/Տեսակ
Զոոգամբակավորների կարգ	Antilocapridae	<i>Ենթափտակ.</i>
	Սնամեջ եղջյուրավորների ընտանիք	<i>Addax ssp., Aepyceros ssp., Alcelaphus ssp., Ammodorcas ssp., Ammotragus ssp., Antidorcas ssp., Antilope ssp., Bison ssp., Bos ssp. (ներառյալ Bibos, Novibos, Poephagus), Boselaphus ssp., Bubalus ssp. (ներառյալ Anoa), Budorcas ssp., Capra ssp., Cephalophus ssp., Connochaetes ssp., Damaliscus ssp. (ներառյալ Beatragus), Dorcatragus ssp., Gazella ssp., Hemitragus ssp., Hippotragus ssp., Kobus ssp., Litocranius ssp., Madogua ssp., Naemorhedus ssp. (ներառյալ Nemorhaedus and Capricornis), Neotragus ssp., Oreamuos ssp., Oreotragus ssp., Oryx ssp., Ourebia ssp., Ovibos ssp., Ovis ssp., Patholops ssp., Pelea ssp., Procapha ssp., Pseudois ssp., Pseudoryx ssp., Raphicerus ssp., Redunca ssp., Rupicapra ssp., Saiga ssp., Sigmoceros-Alecelaphus ssp., Sylvicapra ssp., Syncerus ssp., Taurotragus ssp., Tetracerus ssp., Tragelaphus ssp. (ներառյալ Boocerus).</i>
	Camelidae	<i>Camelus ssp., Lama ssp., Vicugna ssp.</i>
	Cervidae	<i>Alces ssp., Axis-Hyelaphus ssp., Blastoceros ssp., Capreolus ssp., Cervus-Rucervus ssp., Dama ssp., Elaphurus ssp., Hippocamelus ssp., Hydropotes ssp., Mazama ssp., Megamuntiacus ssp., Muntiacus ssp., Odocoileus ssp., Ozotoceros ssp., Pudu ssp., Rangifer ssp.</i>
	Giraffidae	<i>Giraffa ssp., Okapia ssp.</i>
	Hippopotamidae	<i>Hexaprotodon-Choeropsis ssp., Hippopotamus ssp.</i>
	Moschidae	<i>Moschus ssp.</i>
	Suidae	<i>Babyrousa ssp., Hylochoerus ssp., Phacochoerus ssp., Potamochoerus ssp., Sus ssp.,</i>
	Tayassuidae	<i>Catagonus ssp., Pecari-Tayassu ssp.</i>

	Tragulidae	<i>Hyemoschus</i> ssp., <i>Tragulus-Moschiola</i> ssp.
Միասնբակավորներ	Rhinocerotidae	<i>Ceratotherium</i> ssp., <i>Dicerorhinus</i> ssp., <i>Diceros</i> ssp., <i>Rhinoceros</i> ssp.
	Tapiridae	<i>Tapirus</i> ssp.
Proboscidae	Elephantidae	<i>Elephas</i> ssp., <i>Loxodonta</i> ssp.

ԶՈՒՅԳՍՄԲԱԿԱՎՈՐՆԵՐԻ ԿԱՐԳ

Antilocapridae

Antilocapra ենթատեսակ

Addax ենթատեսակ, Aepyceros ենթատեսակ., Alcelaphus ենթատեսակ, Ammodorcas ենթատեսակ, Ammotragus ենթատեսակ, Antidorcas ենթատեսակ, Antilope ենթատեսակ., Bison ենթատեսակ, Bos ենթատեսակ>ներառյալ Bibos-ը, Novibos-ը, Poephagus), Boselaphus ենթատեսակ., Bubalus ենթատեսակ ներառյալ Anoa-ն), Budorcas ենթատեսակ, Capra ենթատեսակ, Cephalophus ենթատեսակ, Connochaetes ենթատեսակ, Damaliscus ենթատեսակ(ներառյալ Beatragus-ը), Dorcatragus ենթատեսակ, Այծեղջերու (*Gazella*) ենթատեսակ, Hemitragus ենթատեսակ, Hippotragus ենթատեսակ, Kobus ենթատեսակ, Litocranius ենթատեսակ, Madogua ենթատեսակ, Naemohedus ենթատեսակ (ներառյալ Nemorhaedus-ը եւ Capricornis), Neotragus ենթատեսակ, Oreamuos ենթատեսակ, Oreotragus ենթատեսակ, Oryx ենթատեսակ, Ourebia ենթատեսակ, Ovibos ենթատեսակ, Ոչխարներ (*Ovis*) ենթատեսակ, Patholops ենթատեսակ, Peleat ենթատեսակ, Procapha ենթատեսակ, Pseudois ենթատեսակ, Pseudoryx ենթատեսակ, Raphicerus ենթատեսակ, Redunca ենթատեսակ, Rupicapra ենթատեսակ, Saiga ենթատեսակ, Sigmoceros-Alecelaphus ենթատեսակ, Sylvicapra ենթատեսակ, Syncerus ենթատեսակ, Taurotragus ենթատեսակ, Tetracerus ենթատեսակ, Tragelaphus ենթատեսակ(ներառյալ Boocerus-ը):

Camelidae

Camelus ենթատեսակ, Lama ենթատեսակ, Vicugna ենթատեսակ

Cervidae

Alces ssp ենթատեսակ, Axis-Hyelaphus ենթատեսակ, Blastocerus ենթատեսակ, Capreolus ssp.ենթատեսակ, Cervus-Rucervus ենթատեսակ., Dama ssp.ենթատեսակ, Elaphurus ssp., Hippocamelus ենթատեսակ, Hydropotes ենթատեսակ, Mazama ենթատեսակ, Megamuntiacus

Ենթատեսակ, Muntiacus ենթատեսակ, (Odocoileus ssp.) ենթատեսակ, Ozotoceros ենթատեսակ,
Pudu ենթատեսակ, Rangifer ենթատեսակ

Giraffidae

Giraffa ենթատեսակ, Okapia ssp

Hippopotamidae

Hexaprotodon-Choeropsis ենթատեսակ, Hippopotamus ենթատեսակ

Moschidae

Moschus ենթատեսակ

Suidae

Babyrousa ենթատեսակ, Hylochoerus ենթատեսակ, Phacochoerus ենթատեսակ, Potamochoerus
ենթատեսակ, Sus(Susssp) ենթատեսակ,

Tayassuidae

Catagonus ենթատեսակ, Pecari-Tayassu ենթատեսակ

Tragulidae

Hyemoschus ենթատեսակ, Tragulus-Moschiola ենթատեսակ

Միասնաբալակորներ(Perissodactyla)

Rhinocerotidae

Ceratotherium ենթատեսակ, Dicerorhinus ենթատեսակ, Diceros ենթատեսակ, (Rhinoceros ssp.)

Tapiridae

Tapirus ենթատեսակ

Proboscidae

Elephantidae

Elephas ssp, Loxodonta ssp. ենթատեսակ

ՀԱՎԵԼՎԱԾ II

4(գ)(i) հոդվածում նշված հիվանդությունները եւ հիվանդություններից զերծ համարվելու նպատակով տարածքի վերաբերյալ ընդհանուր տարրական չափորոշիչները՝ համաձայն 7(ա) հոդվածի

Հիվանդություն	Պայմաններ	Համապատասխան կենդանիներ
Դաբաղի վիրուս	հիվանդության բռնկման բացակայություն, վիրուսային ինֆեկցիայի վկայության բացակայություն (1) եւ վերջին 12 ամսվա ընթացքում պատվաստման բացակայություն	Բոլոր տեսակները
Վեզիկուլյար ստոմատիտ	հիվանդության դեպքի բացակայություն վերջին վեց ամսվա ընթացքում	Բոլոր տեսակները
Խոզերի վեզիկուլյար (բշտիկային) հիվանդություն	հիվանդության դեպքի եւ պատվաստման բացակայություն վերջին 24 ամսվա ընթացքում	Խոզերի ընտանիքի տեսակները
Խոշոր եղջերավոր անասունների ժանտախտ	հիվանդության դեպքի եւ պատվաստման բացակայություն վերջին 12 ամսվա ընթացքում	Բոլոր տեսակները
Մանր որոճողների ժանտախտ	հիվանդության դեպքի եւ պատվաստման բացակայություն վերջին 24 ամսվա ընթացքում	Ոչխարների(Ovis)եւ Այծերի Capra) ցեղերի տեսակներ
Խոշոր եղջերավոր անասունների հպավարակիչ պլեյրոպսեմոնիա	հիվանդության դեպքի եւ պատվաստման բացակայություն վերջին 12 ամսվա ընթացքում	«Bos» ցեղի տեսակներ
Մաշկի ակտինոմիկոզ	հիվանդության դեպքի եւ պատվաստման բացակայություն վերջին 36 ամսվա ընթացքում	«Bos», «Bison» եւ «Bubalus» ցեղերի տեսակներ
Ռիֆտ հովտի ժանտախտ	հիվանդության դեպքի եւ պատվաստման	Բոլոր տեսակները՝

	բացակայություն վերջին 12 ամսվա ընթացքում	բացառությամբ խոզերի ընտանիքին պատկանող տեսակների
--	--	--

▼M2

Ոչխարների կատառային տենդ	հիվանդության դեպքի եւ պատվաստման բացակայություն վերջին 24 ամսվա ընթացքում՝ Culicoides-ի պոպուլյացիայի պատշաճ հսկողությամբ	Բոլոր տեսակները՝ բացառությամբ Bos-ի, Bison-ի Bubalus-ի, Ovis-ի եւ Capra-ի եւ Suidae-ի ընտանիքի
--------------------------	---	--

▼C1

Ոչխարի եւ այծի ծաղիկ	հիվանդության դեպքի եւ պատվաստման բացակայություն վերջին 12 ամսվա ընթացքում	Ovistեւ (Capra) ցեղերի տեսակներ
Խոզերի աֆրիկյան ժանտախտ	հիվանդության դեպքի բացակայություն վերջին 12 ամսվա ընթացքում	Suidae ընտանիքի տեսակներ
Խոզերի դասական ժանտախտ	հիվանդության դեպքի եւ պատվաստման բացակայություն վերջին 12 ամսվա ընթացքում	Suidae ընտանիքի տեսակներ

(1) ԿՀՊՄԳ ձեռնարկի 2.1.1 Գլխին համապատասխան:

ՀԱՎԵԼՎԱԾ III

Պահանջներ անասնաբուժական վկայագրերի նկատմամբ, ինչպես նշված է 11-րդ հոդվածում

1. Կենդանիների խմբաքանակին կցվող անասնաբուժական վկայագիրը տրամադրող՝ առաքման հարցերով զբաղվող իրավասու մարմնի ներկայացուցիչը պետք է ստորագրի վկայագիրը եւ ապահովի, որ դրա վրա պաշտոնական կնիք դրված լինի:

Այս պահանջը կիրառվում է վկայագրի յուրաքանչյուր էջի նկատմամբ, եթե այն բաղկացած է մեկից ավելի էջից:

2. Անասնաբուժական վկայագրերը պետք է կազմված լինեն նշանակետի անդամ պետության կամ այն անդամ պետության պաշտոնական լեզվով կամ լեզուներով, որտեղ տեղի է ունենում սահմանային տեսչական ստուգումը կամ դրան կից ներկայացվի այդ լեզվով կամ լեզուներով հավաստագրված թարգմանություն:

Այնուամենայնիվ, անդամ պետությունները կարող են համաձայնել կիրառել Համայնքի պաշտոնական լեզու, որը դրանց սեփական լեզուն չէ :

3. Անասնաբուժական վկայագրի բնօրինակը պետք է կցված լինի խմբաքանակներին՝ Համայնք մուտքի ժամանակ:

4. Անասնաբուժական վկայագրերը պետք է բաղկացած լինեն՝

ա) մեկ թերթից,

կամ

բ) երկու կամ մի քանի էջերից, որոնք մեկ եւ անբաժանելի թերթի մասն են կազմում,

կամ

գ) համարակալված էջերի հաջորդականությունից՝ նշելու համար, որ դա որոշակի հերթականությամբ կոնկրետ էջ է (օրինակ՝ «չորս էջից երկրորդ էջը»):

5. Անասնաբուժական վկայագրերը պետք է կրեն եզակի նույնականացման համար:

Այն դեպքում, երբ անասնաբուժական վկայագիրը բաղկացած է միմյանց հաջորդող էջերից, յուրաքանչյուր էջում պետք է նշվի այդ եզակի նույնականացման համարը:

6. Անասնաբուժական վկայագիրը պետք է տրվի մինչ այն խմբաքանակը, որի հետ այն կապված է, անցնի առաքման երկրի իրավասու մարմնի հսկողությունը:

ՀԱՎԵԼՎԱԾ IV

«ՀԱՎԵԼՎԱԾ «Զ»

Խորհրդի 1964 թվականի հունիսի 26-ի 64/432/ԵՏՀ հրահանգ՝ «Խոշոր եղջերավոր անասունների եւ խոզերի ներհամայնքային առետրի վրա ազդող՝ կենդանիների առողջական խնդիրների մասին.

Խոշոր եղջերավոր ընտանի կենդանիների խորը սառեցված սերմնահեղուկի ներհամայնքային առետրին եւ ներմուծմանը վերաբերող՝ կենդանիների առողջության նկատմամբ պահանջներ սահմանող՝ Խորհրդի 1988 թվականի հունիսի 14-ի 88/407/ԵՏՀ հրահանգ

Խորհրդի 1989 թվականի սեպտեմբերի 25-ի 89/556/ԵՏՀ հրահանգ՝ «Խոշոր եղջերավոր ընտանի կենդանիների սաղմերի ներհամայնքային առետուրը եւ երրորդ երկրներից ներմուծումը կարգավորող՝ կենդանիների առողջության վերաբերյալ պայմանների մասին»

Խորհրդի 1990 թվականի հունիսի 26-ի 90/426/ԵՏՀ հրահանգ՝ «Ձիազգիների տեղաշարժի եւ երրորդ երկրներից ներմուծումը կարգավորող՝ կենդանիների առողջությանը վերաբերող պայմանների մասին»

Խոզազգիների սերմնահեղուկի ներհամայնքային առետրին եւ ներմուծմանը վերաբերող՝ կենդանիների առողջության նկատմամբ պահանջներ սահմանող՝ Խորհրդի 1990 թվականի հունիսի 26-ի 90/429/ԵՏՀ հրահանգ

Խորհրդի 1990 թվականի հոկտեմբերի 15-ի 90/539/ԵՏՀ հրահանգ՝ «Ընտանի թռչունների եւ ճտահանության համար օգտագործվող ձվերի ներհամայնքային առետուրը եւ երրորդ երկրներից ներմուծումը կարգավորող՝ կենդանիների առողջությանը վերաբերող պայմանների մասին»

Խորհրդի 1991 թվականի հունվարի 28-ի 91/67/ԵՏՀ հրահանգ՝ «Ջրային կենդանիների եւ դրանցից ստացված արտադրանքի շուկայահանումը կարգավորող՝ կենդանիների առողջության վերաբերյալ պայմանների մասին»

Խորհրդի 1991 թվականի հունվարի 28-ի 91/68/ԵՏՀ հրահանգ՝ «Ոչխարների եւ այծերի ներհամայնքային առետուրը կարգավորող՝ կենդանիների առողջության վերաբերյալ պայմանների մասին»

Որոշակի կենդանի սմբակավոր կենդանիներ Համայնք ներմուծելու եւ տարանցիկ փոխադրմանն առնչվող՝ կենդանիների առողջության վերաբերյալ կանոնները սահմանող, 90/426/ԵՏՀ եւ 92/65/ԵՏՀ հրահանգները փոփոխող եւ 72/462/ԵՏՀ հրահանգն ուժը կորցրած ճանաչող՝ Խորհրդի 2004 թվականի ապրիլի 26–ի 2004/68/ԵՀ հրահանգ:»

ՀԱՎԵԼՎԱԾ V

Որոշումների ցանկը

2003/56/ԵՀ՝

Խորհրդի 2003 թվականի հունվարի 24-ի որոշումը՝ Նոր Զելանդիայից կենդանի կենդանիների եւ կենդանական ծագում ունեցող արտադրանքի ներմուծման համար առողջության մասին վկայագրերի վերաբերյալ (ՊՏ L 22, 25.01.2003թ., էջ. 38)

2002/987/ԵՀ՝

Հանձնաժողովի 2002 թվականի դեկտեմբերի 13-ի որոշում՝ Ֆոլկլենդյան կղզիներում գտնվող այն հաստատությունների ցանկի մասին, որոնք լիազորված են Համայնք թարմ միս ներմուծելու համար (ՊՏ L 344, 19.12.2002թ., էջ. 39)

2002/477ԵՀ՝

Երրորդ երկրներից ներմուծված թարմ մսի եւ ընտանի թռչունների թարմ մսի վերաբերյալ հանրային առողջության պահանջները սահմանող եւ 94/984/ԵՀ որոշումը փոփոխող՝ Հանձնաժողովի 2002 թվականի հունիսի 20-ի որոշում (ՊՏ L 164, 22.06.2002թ., էջ. 39)

2001/600/ԵՀ՝

Ոչխարների կատառային տենդի բռնկմանն առնչվող՝ Բուլղարիայից որոշակի կենդանիների ներմուծման հետ կապված պաշտպանական միջոցների վերաբերյալ Հանձնաժողովի 2001 թվականի հուլիսի 17-ի որոշում՝ 1999/542/ԵՀ որոշումը չեղյալ համարող, որոշակի եվրոպական երկրներով խոշոր եղջերավոր կենդանիների եւ խոզերի տեսակների ներմուծման համար կենդանիների առողջության վերաբերյալ պայմանների եւ անասնաբուժական հավաստագրումների մասին 98/372/ԵՀ որոշումը (որը նպատակ ունի Բուլղարիայի հետ կապված որոշ ասպեկտներ հաշվի առնել) փոփոխող եւ ոչխարների ու այծերի ներմուծման առումով անդամ պետությունների կողմից լիազորված երրորդ երկրների ցանկը սահմանող՝ 97/232/ԵՀ որոշումը փոփոխող (ՊՏ L 210, 03.08.2001թ., էջ. 51)

2000/159/ԵՀ՝

Հանձնաժողովի 2000 թվականի փետրվարի 8-ի որոշում՝ երրորդ երկրների՝ մնացորդների մասին պլանների Խորհրդի 96/23/ԵՀ հրահանգին համապատասխան՝ նախնական հաստատման մասին (ՊՏ L 51, 24.02.2000թ., էջ 30)

98/8/ԵՀ՝

Հանձնաժողովի 1997 թվականի դեկտեմբերի 16-ի որոշումը՝ Հարավսլավիայի Միութենական Հանրապետությունում գտնվող այն հաստատությունների ցանկի մասին, որոնք լիազորված են Համայնք թարմ միս ներմուծելու համար (ՊՏ L 2, 06.01.1998թ., էջ 12)

97/222/ԵՀ՝

Անդամ պետությունների կողմից՝ մսամթերքի ներմուծման առումով լիազորված երրորդ երկրների ցանկը սահմանող՝ Հանձնաժողովի 1997 թվականի փետրվարի 28-ի որոշումը (ՊՏ L 89, 04.04.1997թ., էջ 39)

97/221/ԵՀ՝

Երրորդ երկրներից մսի արտադրանքի ներմուծման առումով կենդանիների առողջության պայմանները եւ անասնաբուժական վկայագրերի նմուշորինակները սահմանող եւ 91/449/ԵՏՀ որոշումը չեղյալ ճանաչող՝ Հանձնաժողովի 1997 թվականի փետրվարի 28-ի որոշում (ՊՏ L 89, 04.04.1997թ., էջ 32)

95/427/ԵՀ՝

Հանձնաժողովի 1995 թվականի հոկտեմբերի 16-ի որոշումը՝ Նամիբիայի Հանրապետությունում գտնվող այն հաստատությունների ցանկի մասին, որոնք լիազորված են Համայնք մսամթերք ներմուծելու համար (ՊՏ L 254, 24.10.1995թ., էջ 28)

95/45/ԵՀ՝

Հանձնաժողովի 1994 թվականի փետրվարի 20-ի որոշումը՝ նախկին Հարավսլավական Հանրապետություն Մակեդոնիայում գտնվող այն հաստատությունների ցանկի մասին, որոնք լիազորված են Համայնք թարմ միս ներմուծելու համար (ՊՏ L 51, 08.03.1995թ., էջ 13)

94/465/ԵՀ՝

Հանձնաժողովի 1994 թվականի հուլիսի 12-ի որոշումը՝ Բոստանայում գտնվող այն հաստատությունների ցանկի մասին, որոնք լիազորված են Համայնք մսամթերք ներմուծելու համար (ՊՏ L 190, 26.07.1994թ., էջ 25)

94/40/ԵՀ՝

Հանձնաժողովի 1994 թվականի հունվարի 25-ի որոշումը՝ Զիմբաբվեում գտնվող այն հաստատությունների ցանկի մասին, որոնք լիազորված են Համայնք մսամթերք ներմուծելու համար (ՊՏ L 22, 27.01.1994թ., էջ 50)

93/158/ԵՏՀ՝

Խորհրդի 1992 թվականի հոկտեմբերի 26-ի որոշումը՝ Եվրոպական տնտեսական համայնքի եւ Ամերիկայի Միացյալ Նահանգների միջեւ Համաձայնագրի կնքման վերաբերյալ՝ Համայնքի երրորդ երկրներին վերաբերող հրահանգի, Խորհրդի 72/462/ԵՏՀ հրահանգի եւ խոշոր եղջերավոր կենդանիների ու խոզի մսի առետրին վերաբերող 'Ամերիկայի Միացյալ Նահանգների համապատասխան կարգավորիչ պահանջների կիրարկման մասին Նամակների փոխանակման ձեռով (ՊՏ L 68, 19.03.1993թ., էջ 1)

93/26/ԵՏՀ՝

Հանձնաժողովի 1992 թվականի դեկտեմբերի 11-ի որոշումը՝ Խորվաթիայի Հանրապետությունում գտնվող այն հաստատությունների ցանկի մասին, որոնք լիազորված են Համայնք թարմ միս ներմուծելու համար (ՊՏ L 16, 25.01.1993թ., էջ 24)

90/432/ԵՏՀ՝

Հանձնաժողովի 1990 թվականի հուլիսի 30-ի որոշումը՝ Նամիբիայում գտնվող այն հաստատությունների ցանկի մասին, որոնք լիազորված են Համայնք թարմ միս ներմուծելու համար (ՊՏ L 223, 18.08.1990թ., էջ 19)

90/13/ԵՏՀ՝

Հանձնաժողովի 1989 թվականի դեկտեմբերի 20-ի որոշումը՝ «Համայնք թարմ միս ներմուծելու համար լիազորված հաստատությունների ցանկերը փոփոխելու կամ լրացնելու համար կիրարկման ենթակա ընթացակարգի մասին» (ՊՏ L 8, 11.01.1990թ., էջ 70)

87/431/ԵՏՀ՝

Հանձնաժողովի 1987 թվականի ապրիլի 28-ի որոշումը՝ Սվազիլենդի Թագավորությունում գտնվող այն հաստատությունների ցանկի մասին, որոնք լիազորված են Համայնք թարմ միս ներմուծելու համար (ՊՏ L 228, 15.08.1987թ., էջ 53)

87/424/ԵՏՀ՝

Հանձնաժողովի 1987 թվականի հուլիսի 14-ի որոշումը՝ Մեքսիկայի Միացյալ Նահանգներում գտնվող այն հաստատությունների ցանկի մասին, որոնք լիազորված են Համայնք թարմ միս ներմուծելու համար (ՊՏ L 128, 15.08.1987թ., էջ 43)

87/258/ԵՏՀ՝

Հանձնաժողովի 1987 թվականի ապրիլի 28-ի որոշումը՝ Կանադայում գտնվող այն հաստատությունների ցանկի մասին, որոնք լիազորված են Համայնք թարմ միս ներմուծելու համար (ՊՏ L 121, 09.05.1987թ., էջ 50)

87/257/ԵՏՀ՝

Հանձնաժողովի 1987 թվականի ապրիլի 28-ի որոշումը՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներում գտնվող այն հաստատությունների ցանկի մասին, որոնք լիազորված են Համայնք թարմ միս ներմուծելու համար (ՊՏ L 121, 9.05.1987թ., էջ 46)

87/124/ԵՏՀ՝

Հանձնաժողովի 1987 թվականի հունվարի 19-ի որոշումը՝ Չիլիում գտնվող այն հաստատությունների ցանկի մասին, որոնք լիազորված են Համայնք թարմ միս ներմուծելու համար (ՊՏ L 51, 20.02.1987թ., էջ 41)

86/474/ԵՏՀ՝

Հանձնաժողովի 1986 թվականի սեպտեմբերի 11-ի որոշումը՝ չանդամակցող պետություններից խոշոր եղջերավոր կենդանիների եւ խոզերի ու թարմ մսի ներմուծման հետ կապված իրականացման ենթակա տեղում տեսչական ստուգումների իրականացման մասին (ՊՏ L 279, 30.09.1986թ., էջ 55)

86/65/ԵՏՀ՝

Հանձնաժողովի 1986 թվականի փետրվարի 13-ի որոշումը՝ Մարոկկոյում գտնվող այն հաստատությունների ցանկի մասին, որոնք լիազորված են Համայնք թարմ միս ներմուծելու համար (ՊՏ L 72, 15.03.1986թ., էջ 40)

85/539/ԵՏՀ՝

Հանձնաժողովի 1985 թվականի նոյեմբերի 29-ի որոշումը՝ Գրենլանդիայում գտնվող այն հաստատությունների ցանկի մասին, որոնք լիազորված են Համայնք թարմ միս ներմուծելու համար (ՊՏ L 334, 12.12.1985թ., էջ 25)

84/24/ԵՏՀ՝

Հանձնաժողովի 1983 թվականի դեկտեմբերի 23-ի որոշումը՝ Իսլանդիայում գտնվող այն հաստատությունների ցանկի մասին, որոնք լիազորված են Համայնք թարմ միս ներմուծելու համար (ՊՏ L 20, 25.01.1984թ., էջ 21)

83/423/ԵՏՀ՝

Հանձնաժողովի 1983 թվականի հուլիսի 29-ի որոշումը՝ Պարագվայի Հանրապետությունում գտնվող այն հաստատությունների ցանկի մասին, որոնք լիազորված են Համայնք թարմ միս ներմուծելու համար (ՊՏ L 238, 27.08.1983թ., էջ 39)

83/402/ԵՏՀ՝

Հանձնաժողովի 1983 թվականի հուլիսի 29-ի որոշումը՝ Նոր Զելանդիայում գտնվող այն հաստատությունների ցանկի մասին, որոնք լիազորված են Համայնք թարմ միս ներմուծելու համար (ՊՏ L 233, 24.08.1983թ., էջ 24)

83/384/ԵՏՀ՝

Հանձնաժողովի 1983 թվականի հուլիսի 29-ի որոշումը՝ Ավստրիայում գտնվող այն հաստատությունների ցանկի մասին, որոնք լիազորված են Համայնք թարմ միս ներմուծելու համար (ՊՏ L 222, 13.08.1983թ., էջ 36)

83/243/ԵՏՀ՝

Հանձնաժողովի 1983 թվականի մայիսի 10-ի որոշումը՝ Բոտսվանայի Հանրապետությունում գտնվող այն հաստատությունների ցանկի մասին, որոնք լիազորված են Համայնք թարմ միս ներմուծելու համար (ՊՏ L 129, 19.05.1983թ., էջ 70)

83/218/ԵՏՀ՝

Հանձնաժողովի 1983 թվականի ապրիլի 22-ի որոշումը՝ Ռումինիայի Հանրապետությունում գտնվող այն հաստատությունների ցանկի մասին, որոնք լիազորված են Համայնք թարմ միս ներմուծելու համար (ՊՏ L 121, 07.05.1983թ., էջ 23)

82/923/ԵՏՀ՝

Հանձնաժողովի 1982 թվականի դեկտեմբերի 17-ի որոշումը՝ Գվատեմալայի Հանրապետության այն հաստատությունների վերաբերյալ, որոնցից անդամ պետությունները կարող են թույլ տալ թարմ մսի ներմուծումը (ՊՏ L 381, 31.12.1982թ., էջ 40)

82/913/ԵՏՀ՝

Հանձնաժողովի 1982 թվականի դեկտեմբերի 16-ի որոշումը՝ Հարավային Աֆրիկայի Հանրապետությունում եւ Նամիբիայում գտնվող այն հաստատությունների ցանկի մասին, որոնք լիազորված են Համայնք թարմ միս ներմուծելու համար (ՊՏ L 311, 8.11.1982թ., էջ 16)

82/735/ԵՏՀ՝

Հանձնաժողովի 1982 թվականի հոկտեմբերի 18-ի որոշումը՝ Բուլղարիայի Հանրապետությունում գտնվող այն հաստատությունների ցանկի մասին, որոնք լիազորված են Համայնք թարմ միս արտահանելու համար (ՊՏ L 311, 08.11.1982թ., էջ 16)

82/734/ԵՏՀ՝

Հանձնաժողովի 1982 թվականի հոկտեմբերի 18-ի որոշումը՝ Շվեյցարական Համադաշնությունում գտնվող այն հաստատությունների ցանկի մասին, որոնք լիազորված են Համայնք թարմ միս ներմուծելու համար (ՊՏ L 311, 8.11.1982թ., էջ 13)

81/713/ԵՏՀ՝

Հանձնաժողովի 1981 թվականի հուլիսի 28-ի որոշումը՝ Բրազիլիայի Դաշնային Հանրապետությունում գտնվող այն հաստատությունների ցանկի վերաբերյալ, որոնք

լիազորված են թարմ տավարի միսը եւ հորթի միսն ու ընտանի միասմբակավորների միսը
Համայնք ներմուծելու համար

81/92/ԵՏՀ՝

Հանձնաժողովի 1981 թվականի հունվարի 30-ի որոշումը՝ Ուրուգվայի Հանրապետությունում
գտնվող այն հաստատությունների ցանկի վերաբերյալ, որոնք լիազորված են թարմ տավարի
միսը եւ հորթի միսը, ոչխարի միսն ու ընտանի միասմբակավորների միսը Համայնք ներմուծելու
համար (ՊՏ L 58, 05.03.1981թ., էջ 43)

81/91/ԵՏՀ՝

Հանձնաժողովի 1981 թվականի հունվարի 30-ի որոշումը՝ Արգենտինայի Հանրապետությունում
գտնվող այն հաստատությունների ցանկի վերաբերյալ, որոնք լիազորված են թարմ տավարի
միսը եւ հորթի միսը, ոչխարի միսը եւ ընտանի միասմբակավորների միսը Համայնք ներմուծելու
համար (ՊՏ L 58, 5.03.1981թ., էջ 39)

79/542/ԵՏՀ՝

Որոշակի կենդանի կենդանիներ եւ դրանց թարմ միսը Համայնք ներմուծելու նպատակով
երրորդ երկրների եւ երրորդ երկրների մասերի ցանկը կազմող ու կենդանիների եւ հանրային
առողջության ու անասնաբուժական հավաստագրման պայմանները սահմանող՝ Խորհրդի 1976
թվականի դեկտեմբերի 21-ի որոշում:(ՊՏ L 146, 14.06.1979թ., էջ 15)

78/685/ԵՏՀ՝

Կենդանահամաճարակային հիվանդությունները 72/462/ԵՏՀ հրահանգին համապատասխան
սահմանող՝ Հանձնաժողովի 1978 թվականի հուլիսի 26-ի որոշում (ՊՏ L 227, 18.08.1978թ.,
էջ 32).

1) 2004 թվականի մարտի 30-ի եզրակացություն (Պաշտոնական տեղեկագրում դեռեւս
չհրապարակված):

2) 2004 թվականի փետրվարի 25-ի եզրակացություն (Պաշտոնական տեղեկագրում դեռեւս
չհրապարակված):

3) ՊՏ L 302, 31.12.1972թ., էջ 28: Թիվ 807/2003 (ԵՀ) կանոնակարգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ L 122, 16.05.2003թ., էջ 36):

4) ՊՏ L 18, 23.01.2003թ., էջ 11:

5) ՊՏ L 61, 03.03.1997թ., էջ 1: Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 1882/2003 կանոնակարգով (ԵՀ) փոփոխված կանոնակարգ (ՊՏ L 284, 31.10.2003թ., էջ 1):

6) ՊՏ L 224, 18.08.1990թ., էջ 42: Թիվ 806/2003/ԵՀ կանոնակարգով (ԵՀ) փոփոխված հրահանգ (ՊՏ L 122, 16.05.2003թ., էջ 1):

7) ՊՏ L 340, 11.12.1991թ., էջ 17: Թիվ 806/2003 կանոնակարգով (ԵՀ) փոփոխված հրահանգ:

8) ՊՏ L 268, 24.09.1991թ., էջ 56: 96/43/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ

9) ՊՏ L 184, 17.07.1999 թ., էջ 23:

10) Տե՛ս սույն Պաշտոնական տեղեկագրի 83-րդ էջը:

11) ՊՏ L 31, 01.02.2002թ., էջ 1: Թիվ 1642/2003 կանոնակարգով (ԵՀ) փոփոխված կանոնակարգ (ՊՏ L 245, 29.09.2003թ., էջ 4):

12) ՊՏ L 268, 14.09.1992 թ., էջ 54: Հանձնաժողովի թիվ 1398/2003 (ԵՀ) կանոնակարգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ L 198, 06.08.2003թ., էջ 3):

13) ՊՏ L 395, 30.12.1989թ., էջ 13: Թիվ 806/2003 կանոնակարգով (ԵՀ) փոփոխված հրահանգ ՊՏ L 224, 18.08.1990թ., էջ 29:

Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2002/33/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 315, 19.11.2002թ., էջ 14):

15) ՊՏ L 28, 02.02.1994 թ., էջ 47: Որոշում, ինչպես վերջին անգամ փոփոխված էր 2004/211/ԵՀ որոշմամբ:»

16) ՊՏ L 31, 01.02.2002թ., էջ 1:

17) ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23:»